

Հաստատված է՝

Հայաստանի Հանրապետության

մշակույթի նախարարի

2017 թ. ապրիլի 21-ի

թիվ 221-Ա հրամանով

Նախարար՝

 Ամիրյան

Կազմված է 2017 թ. ապրիլի 10-ին և
բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
օրինակ 2
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Մյասնիկյանի տարածքային
բաժնի կողմից 07.02.2003 թ.
Գրանցման համար՝ 273.210.03420
Վկայական 03 Ա 059045
ՀՎՀՀ 01506092

07.02.2003 թ. գրանցված
Կանոնադրության թիվ 004.3
փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

« 07 » 07 2017 թ.



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2017 թ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 24-ի N 1204-Ն որոշման 1-ին, 2-րդ կետերի և 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնադրության 1-ին կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի ազգային գրադարան» պետական հիմնարկի և «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03440) իրավահաջորդը և նրան են անցնում միացված կազմակերպության իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:»:

2) Կանոնադրության 11-րդ կետի ծ) ենթակետից հետո լրացնել կ), հ), ձ), ղ) ենթակետերը հետևյալ բովանդակությամբ.

«կ) պատրաստում է Հայաստանի Հանրապետությունում հրատարակությունների վերաբերյալ տարեկան վիճակագրությունը.

հ) համաձայն ISBN, ISMN միջազգային գործակալությունների և ISSN ազգային կենտրոնի կողմից ISBN, ISMN ազգային գործակալությունների և ISSN ազգային կենտրոնի համար սահմանված գործառույթների՝ Հայաստանի Հանրապետությունում հրատարակչությունների, հրատարակություն իրականացնող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների հիման վրա իրականացնում է ISBN, ISMN, ISSN և այլ համակարգերում նրանց գրանցումը, առանձին հրատարակիչներին և (կամ) նրանց հրատարակություններին հատկացնում է համապատասխան նույնականացուցիչներ և վարում դրանց հաշվառումը,

ձ) իրականացնում է գիտամեթոդական ձեռնարկների և ուղեցույցների մշակումը.

ը) մշակում է համակարգչային տառատեսակներ, որոնց նկատմամբ պետական ֆինանսավորմամբ մշակված համակարգչային տառատեսակների գույքային իրավունքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:»:

2. Սույն փոփոխությունները հանդիսանում են «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության՝ գրանցված 2003 թվականի փետրվարի 7-ին, անբաժանելի մասը: